ԳԱՌՆԻԿ ՄՈՄՋՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ

1908-1911 թվականներին ՀՅԴ և Ս.Դ.Հնչակյան կուսակցությունները եկեղեցիները օգտագործում էին որպես հավաքատեղիներ՝ ժողովներ ու հավաքույթներ անցկացնելու համար, որը հանգեցնում էր Ռամկավարների զայրույթին, չնայած նրան, որ պատրիարքարանը օժանդակում էր նրանց: Մինչև 1914 թվականը ՌԱԿ-ը չկարողացավ ամրապնդել իր դիրքերը և չունեցավ ակտիվ քաղաքական դերակատարում: Դաշնակցության և երիտթուրքերի փոխհարաբերությունները անմիջապես արտահայտվեցին ներքին կյանքում՝ մասնավորապես կուսակցություններ-պատրիարքարան փոխհարաբերություններում: Այսպես 1908 թվականի հուլիսի 16-ին Դաշնակցության մասնակցությամբ պաշտոնանկ արվեց պատրիարք Մ. Օրմանյանը:

1910-1912 թվականներին Դաշնակցությունը ծավալեց հակապատրիարքական գործունեություն, որը առաջ բերեց միջկուսակցական հարաբերությունների վատթարացման՝ մասնավորապես Ռամկավարների հետ, որը համարվում էր պատրիարքի հենարանը: Ռամկավարները 1910 թվականից անցան պատրիարքարանի հովանավորության տակ և մի շարք հարցերում պաշտպանում էին նրա վարքագիծը: Նրանք առաջնորդվում էին իրենց համագումարում ընդունված որոշմամբ, որ Հայոց եկեղեցական գործերը վարչական գործերից անջատելու մասին: Նրանք կողմնորոշվում էին դեպի պատրիարքարանը, բայց միաժամանակ չէին կարող անտեսել ժողովրդական որոշ զանգվածների պնդումը՝ իրենց հռչակելու համազգային կուսակցություն: Ռամկավարները դեմ էին հեղափոխական ելույթներին, կողմ էին խաղաղ զարգացման գաղափարին: Ս.Դ.կ-ը հանդես է գալիս մի շարք հայտարարություններով՝ մասնավորապես նշելով, թե Դաշնակցությունը վտանգ է ներկայացնում հայկական արժեքային համակարգին: Պայքարն այն աստիճան սրվեց, որ դաշնակցական Ա.Վռամյանը ցանկանում էր եկեղեցում անցկացնել հավաք, իսկ Ռամկավարները այդ ժամանակ շրջապատեցին եկեղեցին և սկսվեց հրմշտոց[1]:

[1] Ճիզմեճյան Մ. Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությունների 1890-1928, Ֆրեզնո, 1930, էջ 117:

Մ.Իզմիրլյանը, որը 1908 թվականի սեպտեմբերի 22-ին ընտրվելով պատրիարք, հայտարարեց, որ հայերը Սահմանադրությունը ընդունեցին խանդավառությամբ, իսկ նոյեմբերի 6-ին տպագրվեց նրա հորդորը հայությանը՝«Հայ ազգը՝ հավասարության, արդարության և ազատության հիման վրա հիմնված Օսմանյան սահմանադրական ազգի մեկ տարրը կազմելով՝ ամենքս պետք է աշխատենք մեր քաղաքացիական պարտականությունները կատարենք ընդհանուր երկրի համար»[2]: Նրա օրոք սկսեցին ծայր տալ կուսակցությունների ներքին վեճերը և հետզհետե ընդունեցին սուր բնույթ: Հայ քաղաքական կուսակցությունների կողմից ուշադրության էր արժանանում «երկաթյա պատրիարք» Մ.Իզմիրլյանը: 1909 թվականի հունվարին, Սուրբ Ծննդյան օրը Իզմիրլյանը հայտարարեց, որ համագործակցում է բոլոր քաղաքական ուժերի հետ՝ հանուն բոլոր նպատակների իրականացման: Դաշնակցության և Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները վարձեցին շոգենավեր՝ Մարմարա ծովում նրան դիմավորելու նպատակով: Նրանք իրենց նավերի վրա անցկացրեցին հանրահավաքներ, որը ազդարարում էր այդ պահի քաղաքական նշանակությունը[3]:

Հայ քաղաքական կուսակցությունների թուլացման նպատակով ընտրությունների նախաշեմին երիտթուրքերը սկսեցին համագործակցել Կ. Պոլսի Ազգային վարչության և պատրիարքի հետ: Նման մոտեցում ցուցաբերեցին նաև Հնչակյան կուսակցությունը և ՀՅԴ: Հնչակյան կուսակցությունը ներկայացրեց գործողությունների ծրագիր պատրիարքի համար[4]: Դաշնակցությունը շեշտեց, որ ինքը ազգային խնդիրները չի դնի վարդապետական շեմին, բայց ստիպված գնաց մասնակի զիջողությունների: Իզմիրլյանի ածող հեղինակությունը քաղաքական կուսակցություններին ստիպում էր գնալ պատրիարքարանի հետ մերձեցումների: Հնչակյան կուսակցության պատգամավոր Հ.Արամյանը առաջարկեց համատեղ գործունեության ծրագիր պատրիարքի հետ: Արդյունքում ծագեց մրցակցություն երկու կուսակցությունների (ՀՅԴ և ՍԴՀ) միջև՝ պատրիարքի հետ համաձայնագիր կնքելու համար՝ ազգային շահերը համատեղ ներկայացնելու նպատակով: Պատրիարքը կարող էր դառնալ հաշտարար դատավոր և երաշխավոր ազգային ակնկալիքների արտահայտման: Դաշնակցությունը ուներ այլ կարծիք, ըստ որի պատրիարքարանը չի ներկայացնում ազգային քաղաքական մարմին: Պատրիարքը նախաձեռնեց միջոցներ ազգային քաղաքական ուժերի միջև միասնություն ապահովելու նպատակով: Պատ-

---

[2] «Ձայն Հայրենեաց»,Կ.Պոլիս, 1908, նոյեմբերի 6:
[3] «Մշակ» Թիֆլիս, 1908, օգոստոսի 27:
[4] Սապահ-Գյուլյան Ս. Պատասխանատուները. Փրովիդենս, 1916, էջ 288:

ţիարքարանի կողմից կուսակցություններին տրվում էին տարբեր վարքագծեր: Դաշնակցությունը բնութագրվում էր որպես ծայրահեղ, որը լիբերալ մամուլում նշվում էր էկլեկտիզմի (իրար հակասող տեսակետներ) կողմնակից: Այն համոզումն էր իշխում, որ ստորագրել համաձայնագիր Իթթիհաթի հետ, երբ ողջ ազգը բոլոր մասերից բողոքում է Իթթիհաթի կառավարության դեմ դա անբարոյականություն է: Իսկ ՀՅԴ-ն այս ամենը համարում էր ոչ թե անբարոյականություն, այլ մարտավարություն[5]:

Դաշնակցությունը Ա.Շահրիկյանի շուրթերով հայտարարում էր, որ ազգը պետք է կանգնի կամ Դաշնակցության կողմը կամ միավորվի պատրիարքի հետ» և զարմանում, որ այդ ընտրությունը կատարվում էր հօգուտ վերջինի[6]: Ժողովուրդն անվանաբար կապված էր պատրիարքարանի հետ, որպես Թուրքիայում հայ քաղաքական, կրթական և մշակութային կենտրոն: Դա ստիպեց Դաշնակցությանը օգտագործել տարբեր միջոցներ, ազդելու հասարակական գիտակցության վրա՝ հօգուտ իրեն: 1910 թվականի մարտի 28-ի պատրիարքի որոշումով եկեղեցու դռները փակվեցին հանրահավաքների անցկացման համար: Ուժեղանում էր քաղաքական ուժերի միջև բևեռացումը: Պատրիարքը ստիպված էր շոշափել ազգային շարքերի միասնության հարցը ընդհանուր ժողովում ելույթի ժամանակ: Եկեղեցիներում հանրահավաքների դադարեցման որոշումը ունեցավ մեծ արձագանք: Եթե Ռամկավարները ընդունեցին Ազգային վարչության որոշումը ի գիտություն, ապա մյուսները ընդունեցին հակադիր դիրքորոշում[7]: Տեղի ունեցան միջկուսակցական հանդիպումներ Հնչակյան կուսակցության և Դաշնակցության ներկայացուցիչների մասնակցությամբ՝ եկեղեցիներում հանրահավաքների արգելման հարցի վերաբերյալ: Հանդիպման վերջում ընդունվեց համատեղ որոշում՝ ներդնել բոլոր ջանքերը՝ արգելումը թույլ չտալու՝ քանզի դա չէր համապատասխանում հայ եկեղեցու ոգուն[8]: Ազգային ժողովի նիստի ժամանակ, 1910 թվականի հուլիսի 23-ին պատրիարքը զեկուցեց հուլիսի 19–ի դեպքի մասին, որի ժամանակ զոհվել էր մի հույն պատանի և առաջարկեց երեք ամսով դադարեցնել բոլոր տեսակի հանրահավաքները եկեղեցիներում[9]: Նիստի ժամանակ նշվեց, որ պատրիարքի կարծիքը հաշվի կառնվի, սակայն նրան ըմբռնումով չմոտեցան հայ բոլոր քաղաքական ուժերը: 1910 թվականի հուլիսի 25-ին տեղի ունեցավ ռամկավարների ժողովը՝

---

[5] Тунян В.Г, Младотурки и Армянский Вопрос 1908-1912 гг., том.1,ст 215, Ерван, 2004.
[6] «Մշակ» Թիֆլիս, 1910, մարտի 11:
[7] Армянская жизнь, Баку, 1910, 17 июля.
[8] Նույն տեղում, 1910, 13 июля.
[9] «Մշակ» Թիֆլիս, 1910, 1 օգոստոսի:

Վ. Թեքեյանի գլխավորությամբ: Նրանք որոշեցին ի կատար ածել և պաշտպանել Ազգային ժողովի եկեղեցիներում հանրահավաքներ անցկացնելու արգելքի որոշումը, սակայն ժողովը վերջացավ ծայրահեղական ներկայացուցիչների հետ բախմամբ, որոնք առաջարկում էին այլ մոտեցում: Քաղաքական ուժերի տեսադաշտում էր գտնվում 1910 թվականի սեպտեմբերի 14-ին նախատեսվող եկեղեցական ժողովը Կ.Պոլսում: Հետևելով քաղաքական վայրի վերումներին՝ ռուսական դեսպանությունը Կ.Պոլսում գտնում էր, որ դաշնակցությունը ցանկանում է իրեն ենթարկել հայ եկեղեցին: Դաշնակցությունը դիմեց Կ. Պոլսի պատրիարքին որպեսզի նա դիմի հայ հոգևորականությանը որպեսզի հրավիրվի եկեղեցական ժողով, եկեղեցական գործերում բարենորոգումներ անկացնելու համար: Եկեղեցական ժողովը չկայացավ: Այն հետաձգվեց անորոշ ժամանակով պատրիարքի հիվանդության պատճառով, ինչի մասին տեղեկացվեց նաև ռուսական կառավարությանը: Պատրիարքը բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին հրավիրեց պատրիարքարան և առաջարկեց պահպանել եկեղեցիներում հանրահավաքներ չանցկացնելու մասին որոշումը երեք ամսյա դադարի վերաբերյալ[10]: 1910 թվականի հոկտեմբերի 7/20 Ռամկավար կուսակցության կենտրոնական մարմինը ուղերձ ուղղարկեց Ամենայն Հայոց կաթողիկոսին եկեղեցիներում հարնրահավաքներն արգելելու մասին: Ուղերձում նշվում էր, որ Դաշնակցությունը չի պահպանում հանրահավաքներ չանցկացնելու մասին որոշումը, և շարունակում է անցկացնել հանրահավաքներ: Նրանք խնդրում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին իր իրավասության շրջանակներում հաստատել վերը նշված որոշումը[11]: Պատրիարքի կոչը հանրահավաքների դադարի մասին որոշումն երկարածգելու վերաբերյալ Դաշնակցությանը ստիպեց ճշգրտումներ մցնել իր փոխհարաբերություններում: 1910 թ. հոկտեմբերի 15-ի «Արաչ» թերթում տպագրված հոդվածով ՀՅԴ պահանջում էր պատրիարքի հրաժարականը, որպես պատճառ նշելով՝ նրա թուլակամությունը և պատրիարքարանի քաղաքական գծի չհամապատասխանությունը իրենց քաղաքական գծին[12]: Հոկտեմբերի 22-ին պատրիարքը հրաժարականի դիմում ներկայացրեց Ազգային վարչությանը: Պատրիարքը նշում էր, որ վեր լինելով ամեն տեսակ կուսակցականությունից, նա չկարողացավ հաստատել խաղաղ և ներդաշնակ հարաբերություններ տարբեր ուժերի միջև ազգային կյանքում:

---

[10] Взгляд патриарха Дуряна относительно митингов- Армянская жизнь Баку. 1910, 23 сентября.

[11] Նյութեր հայ եկեղեցու պատմությունից, կազմ. Ա. Քեյբության, Երևան, 2001, հ.8, N 702, էջ 844-847:

[12] «Մշակ», Թիֆլիս, 1910,հոկտեմբերի 31:

Ազգային վարչությանը կոչ էր արվում ընբռնումով մոտենալ պատրիարքի հրաժարականին[13]: Պատրիարքի հրաժարականը միաժամանակ սառեցրեց տարաձայնությունները հայ քաղաքական կուսակցությունների, նրանց մոտեցումները և տարբերությունները Օսմանյան Թուրքիայում ազգի գոյատևման մասին:

1910 թվականի հոկտեմբերի 22-ի Ազգային վարչության նիստի օրակարգում երկու հարց էր դրված. առաջինը քաղաքական լարված իրավիճակի վերլուծությունը և երկրորդը՝ պատրիարքի հրաժարականը: Առաջին հարցը մերժվեց, իսկ երկրորդ հարցի քննարկումը հետաձգվեց անորոշ ժամանակով: Պատրիարքի հրաժարականը կառավարության կողմից ընդունվեց սովորական և նրա գործունեությունը Ազգային վարչության մասով գնահատվեց ոչ բավարար[14]: Պատրիարքի հրաժարականը հանկարծակիի բերեց պահպանողական և կենտրոնամետ ուժերին: «Արևելք», «Ժամանակ» և «Բյուզանդիոն» թերթերը սկսեցին հարձակումներ գործել պատրիարքի դեմ՝ նրան մեղադրելով միջոցներ չձեռնարկելու համար: Ստեղծված իրավիճակում շեշտվում էր, որ կուսակցությունների կուռ շարքերի բացակայությունը և պատրիարքի թուլությունը առաջ բերեցին քաոս և ցրվածություն ազգային կյանքում: Պատրիարքը գիտակցելով իր թուլությունը, հրաժարական ներկայացրեց, սակայն հնչում էր այն կարծիքը, որ հրաժարականը նրան չի փրկի: Լարված էին հարաբերությունները պատրիարքի և երիտթուրքերի միջև: Ազգային վարչությունը պարտավորեցրեց Ե.Դուրյան պատրիարքին՝ ետ չվերցնել իր հրաժարականը մինչև չբավարարվի բոլոր իր խնդրագրերը: Հակառակ դեպքում Ազգային վարչությունը ևս կլուծարվի: Պատրիարքի հրաժարականի դեմ հանդես եկավ Մ. Չերազը, նշելով, որ նա պետք է բանակցություններ վարի կառավարության հետ, ինչպես հունական պատրիարքը, իսկ Դաշնակցության ներկայացուցիչ Ա.Շահրիկյանը նշեց, որ այդ որոշումը Դուրյանին պարտադրվել է իր կամքին հակառակ[15]: «Մշակ» թերթը հանդես եկավ ծայրահեղ ուժերի գործունեության քննադատությամբ: Պահպանողական «Սուրհանդակ» թերթը պատրիարքի հրաժարականը դիտում էր հետևանք քաղաքական ուժերի կողմից հասնելու նրա զիջմանը հանրահավաքների անցկացման հարցում[16]: Ս.Պետերբուրգում պատրիարքի հրաժարականը մեկնաբանվեց որպես անհամաձայնության հետևանք քաղաքական ուժերի և պատրիարքի միջև: Դաշնակցությունը այս

---

[13] Նույն տեղում, N 710, էջ 856:
[14] Патриархий кризис, Армянская жизнь, Баку, 1910, 26 ноября.
[15] Նյութեր հայ եկեղեցու պատմությունից, կազմ. Ա. Բեյբության, Երևան, 2001, N 278, էջ 410:
[16] Армянская жизнь, Закавказье, 1910, 22 октября.

առթիվ հայտարարում էր, որ եկեղեցին պետք է սահմանափակվի իր կրոնական գործերով: Երկրի մի շարք շրջաններում դաշնակցականները հոգևորականներին ուղղակի քշում էին ասպարեզից և համայնքի կառավարումը վերցնում իրենց ձեռքը: «Բյուզանդիոնը» գրում էր «շաբաթ օրը հեռագիր հասավ պատրիարքարան, թե մի խումբ դաշնակցականներ առաջ նորդարանի բոլոր պաշտոնական մարմիններին դուրս են հանել և ասել են, որ այլևս իրենք պիտի կառավարեն ազգային գործերը»[17]:

Ռամկավար Վ.Թեքեյանը 1910 թվականի հուլիսի 15-ին գրում էր ՀՅԴ-ի վարքագծի վերաբերյալ և շեշտում, որ պատրիարքը հրաժարվեց այն «պատճառով, որ ազգը պետք է, որ ամբողջովին իբրև մեկ մարմին իր պատրիարքի հետ լինի և ոչ թե իր մեկ հատվածը կառավարական գերիզոր կուսակցության հետ՝ Իթթիհաթի հետ, համաձայնություն կնքելով տկարացներ պատրիարքի դիմումի ազդեցությունը»: Սինչ այդ 1910 թվականի ապրիլի 19-ին պատրիարքը հանդես եկավ կոչով որում շոշափում էր հասարակության շարքերի միասնությունը, նշելով, որ դժվարությունները կարելի է հաղթահարել միասնական ջանքերի շնորհիվ[18]: Դաշնակցությունն ամեն չափ ու սահման մոռացած պահանջում էր եկեղեցու բեմերը օգտագործել իր քաղաքական ու կուսակցական հավաքույթների համար[19]: Խնդիրը մինչև այն աստիճան սրվեց, որ Դաշնակցությունը առաջարկում էր ընտրել իր պատրիարքին: Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները որոշեցին, որ եկեղեցին պատկանում է հավատացյալ ժողովրդին և չեն խանգարի հավատացյալ հոտի հանգիստը ու դատապարտեցին Դաշնակցության այդօրինակ քայլերը: 1911 թվականի դեկտեմբերի 2-ին Ազգային ժողովում տեղի էին ունենում պատրիարքի ընտրությունները: Ընտրությունների ընթացքում զգացվում էր քաղաքական լարվածություն, որում քաղաքական ուժերը առաջնորդվում էին «ոչ մի զիջում»[20] նշանաբանով: Այդ ժամանակահատվածում Դաշնակցությունը նպատակահարմար էր գտնում անցկացնել նոր պատրիարքի ընտրություններ: Առաջադրված թեկնածուների ցուցակները պետք է նայեր Ազգային ժողովը[21]: Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին Դաշնակցության ղեկավարությանը, որ միակ հաղթող թեկնածուն արքեպիսկոպոս Ե.Դուրյան էր:

---

[17] «Մշակ» Թիֆլիս, 1910, 10 ապրիլի:
[18] «Մշակ» Թիֆլիս, 1910, 21 ապրիլի:
[19] Կիտուր. Ա, Պատմություն Ս.Դ.Հնչակյան կուսակցության, Բեյրութ, 1962, էջ 338:
[20] Թուրքահայերի Պատրիարքի ընտրությունները «Արարատ»,Բեյրութ, 1911,թիվ 1:
[21] Հայոց եկեղեցին,«Արարատ» Բեյրութ, 1911, թիվ 12, էջ 974: